

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՆԵՐՈՒ ԴԱՍԱԳՈՒԼ ԵՒ ՑՈՅՑ

Լիբանանեան համալսարանի դասախօսները, պետական վարժարաններու ուսուցիչները եւ պետական վարչութիւններու պաշտօնեաները, իրենց լիկաներու գործունէութեան համակարգում յանձնախումբ մը որոշումին ընդառնջելով, երէկ կատարեցին ընդհանուր գործադուլ մը եւ ցոյց մը, որուն մասնակցեցան հոծ բազմութիւն մը:

Ցոյցը սկսեալ Պարպիրի հրապարակէն, ուղղուեցաւ «Պըշարա խուրի» պողոտայէն դէպի Ռիատ Սոյհ հրապարակ, բայց չկրցաւ նախատեսուածին պէս հասնիլ վարչապետարան, որովհետեւ ներքին ապահովութեան ուժերու անցարգել մը արգելք հանդիսացաւ:

Ցուցարարներուն առջեւ կը քալէին բազմաթիւ երեսփոխաններ, Աշխատաւորական Ընդհանուր Համադաշնակցութեան նախագահ Դասսան Լըսն եւ այլ անձնաւորութիւններ:

Գործադուլն ու ցոյցը կատարուեցան բողոքելու համար այն օրինագիծին դէմ, որուն հիմամբ կառավարութիւնը կ'առաջարկէ վերջ դնել մնացուած պետական պաշտօնեայի դրութեան եւ անոր փոխարէն հաստատել ժամանակամիջոցի մը համար պայմանագիրով աշխատողներու դրութիւն:

ԱՊԱՆՈՎՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

Ապահովութեան կեդրոնական խորհուրդը երէկ գումարեց ժողով մը, գլխաւորութեամբ Գերբի Գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Էլիաս Մըրի եւ ներկայութեամբ լիբանանեան բանակի եւ Լիբանանի մէջ ստրիակաւ ուժերուն ապահովութեան մարմիններու պատասխանատուներուն ու ներկայացուցիչներուն:

Ժողովը քննարկեց երկրի ապահովական վիճակը, կեդրոնաձայով արգիլեալ «Լիբանանեան ուժերու» պատասխանատուներէ՝ երկրաչափ Ռամզի Իրանիի անհետացումի հարցին վրայ: Տարբեր մարմիններ ներկայացուցին այս գծով իրենց կատարած

հետաքննութեանց ցարդ տուած արդիւնքները:

Նախարար Մըր պահանջեց յանձնառնել եւ աշխատանք՝ կարելի եղածին չափ շուտ ստուգելու իրանիի անհետացումի պատճառներն ու անոր ճակատագիրը:

Ժողովը նաեւ քննարկեց ամրան սեմին ապահովական միջոցառումները, թմրեցուցիչի բոյներու ցանքի փճացումը արշափ ընթացքը, հարաւի մէջ ապահովական աշխատանքը եւ Եւրոպայի ուղղութեամբ ապօրինի գաղթի դէմ միջոցառումները:

Ժողովէն ետք, նախարար Մըր ընդունեց իրանիի ընտանիքէն պատուիրակութիւն մը, որուն հաւաստեց, որ ինք անձամբ կը հետեւի այս հարցին:

«Գ. ԿԻԷԼ ՊԵՆԿԵԱՆ» ԻՄՍՆԱՐԿԻ ԶԱՅԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ԶԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆԻ (ԱԶՈՒՆԻԿԻ) ՄԵԶ



Արամ Ա. կաթողիկոսի կարգադրութեամբ, Երկուշաբթի, 13 Մայիսին, Հայ Ազգային Բուժարան - Ապուստ Կիւլպէնկեան» հիմնարկի հայկական բաժանմունքի նախագահ տէր եւ տիկին ղոկո. Մայքըլ եւ Տիւն Եսայեաններ, նոյն բաժանմունքի գործադիր տնօրէն ղոկո. Չաւեն Եկաւեան, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ Նորայր Օ. Վրդ. Ալըքեան, «Կիւլպէնկեան» հիմնարկի Լիբանանի ներկայացուցիչ Փիլիպոս Դանիէլեան եւ Տիգրան Եկաւեան:

Շար.՝ էջ 10

ԶՕՐ. ԼԱՅՈՒՏ ԵՒ ԶԱՐԻՐԻ ...

Շարունակուած Ա. էջէն

տեսակէտները, մանաւանդ ինչ կը վերաբերի նախարարաց խորհուրդի ղեկավարութեան՝ իբրեւ գործադիր իշխանութիւն:

Պետական նախարար Թալալ Արսլան նախագահ Լաճուտի հետ տեղական եւ շրջանային զարգացումները քննարկելէ ետք կատարուած իր յայտարարութեան մէջ ընդգծեց, որ պետութեան շահը հիմը պէտք է հանդիսանայ կառավարութեան առած ամէն քայլի, միջոցառումի կամ կեցուածքի, մանաւանդ տնտեսութեան վերաբերող հարցերուն մէջ, որովհետեւ տնտեսական վիճակը արտակարգ ուշադրութեան պէտք է արժանանայ:

Աշխատանքի նախարար Ալի Քանոս նախագահ Լաճուտի ներկայացուց աշխատանքի հարցերու արարական կազմակերպութեան ժողովներուն ընթացքը, երկրի ընդհանուր հարցերը եւ նախարարութեան աշխատանքին ընթացքը, մանաւանդ ինչ կը վերաբերի արարներու եւ օտարահպատակներու աշխատանքի արտօնագիրին:

Անթիլիասի մարտնիներու առաջնորդ Եուսէֆ Պրաշար նախագահին հետ քննարկեց ընդհանուր եւ կրթական հարցեր:

Նախագահ Լաճուտ երէկ երեկոյեան ընդունեց նախկին վարչապետ Օմար Քարամէի այցելութիւնը: Քարամէ միայն ըսաւ, որ խօսած են ներքին, շրջանային եւ միջազգային բեմերու զարգացումներուն մասին:

ԹԵՆ ԱԻԻԻ ԸԱԿԱՊԱՂԵՍԻՆԵԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԶ...

Շարունակուած Ա. էջէն

րանէ մը, որ պաշարուած էր իսրայէլեան ուժերուն կողմէ:

Պաղեստինեան աղբիւրներ սակայն յայտնեցին, որ երկու պատասխանատուները սպաննուած են իրենց անկողնիներուն մէջ, առաւօտեան ժամը երեքին: Իսրայէլեան բանակը յայտնեց նաեւ, որ երրորդ պատասխանատու մը, որ կը պատկանէր Արաֆաթի պահակաւորին՝ «Ում 17», ձերբակալուած է, չորրորդ մըն ալ յաջողած է փախուստ տալ:

Իսրայէլեան բանակը յաճախակի կերպով կը ձեռնարկէ նման յարձակումներու Այսրիլը նախկին գիւղերուն ու քաղաքներուն դէմ՝ պաղեստինցիներուն բարկութիւնը հրահրելով: Բանակը Երկուշաբթիին երեքշաբթի լուսջրդ գիշերուան ընթացքին քանի մը գիւղի մէջ 14 հոգի ձերբակալեց: Ըստ

անկախ պետութեան մը գաղափարը մերժող որոշում մը որդեգրուեցաւ Կիրակի օր: Շարունի մրցակիցը՝ նախկին վարչապետ Պենիամին Նեթանիահու առաջարկած էր բանաձեւը, որուն վերջնական դրուելով ապահոված էր քուէտնութեան վարչապետի պաշտօնը:

Միւս կողմէ, դիմակաւոր պիւնյալներ Երկուշաբթի երեկոյեան յարձակեցան պաղեստինցի նախարար Հանա Լաճուտի վրայ Ռամալլայի մէջ: Պաշտօնի պիւնյալներ յայտնեցին, որ Լաճուտի հիւանդանոց փոխադրուեցաւ թեթեւ վէրքեր ստանալէ ետք: Անոնք արեւելցուցին, որ հինգ պիւնյալներ յարձակած են Լաճուտի վրայ, երբ ան ինքնաշարժի դուրս եկած է բնակարանին դիմաց: Արաֆաթի խորհրդատուներէն Լիմէտ Ապտէլուսեման ըսաւ, որ արաբական ռաճիք մըն է ուղղուած նախարարին դէմ՝ նպատակ ունենալով հարածել պաղեստինեան իշխանութիւնը: Ապտէլուսեման արեւելցուց, որ Արաֆաթ ապահովութեան ուժերուն հրահանգած է գտնել ու ձերբակալել պատասխանատուները:

ԶԱՐՈՆ ԿԸ ՎԱՅԵԼ ԵՄԵԱՍՏԻՆՈՒԹԵԱՆ ԶՕՐԱԿՍՈՒԹԵԱՆ ԼԻԵՆՏԻ ՄԵԶ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն կը վայելէ մեծամասնութեան զօրակցութիւնը Լիբուտի մէջ, ուր պաղեստինեան

Շար.՝ էջ 10

ԸՆՏՐԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇԷ

Երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն կարելի չէ մասնակցիլ առանց ընտրական քարտի:

- Բոլոր այն քաղաքացիները, որոնք ընտրական քարտ չունին, կրնան դիմել Ը. Յ. Դ. հետեւեալ ակումբները.
- ՊԵՏՐՈՒԹԻ ԸՐԶԱՆ Ազատամարտ ակումբ - Էշրեֆիէ՝ 01/449924
- Ռոստոմ ակումբ - Շայաշէն՝ 01/328471
- Նշան Փալանճեան ձեմարան - Արեւմտեան Պէյրութ՝ 01/375412
- Տիգրան Ծամհուր ակումբ - Մար Սիլայէ՝ 01/580141
- ՖԱՆՆԻԵ ԵՒ ՌԱՍԻՏԱՅԻ ԸՐԶԱՆ Ե. Ակմունի ակումբ - Ֆանար՝ 01/891546
- Ռաուտայի ակումբ՝ 01/683372
- ՄԵԼԻԿԱՆ ԸՐԶԱՆ Աղբալեան ակումբ՝ 04/722902
- Նաքքաշի կեդրոն՝ 04/410691
- Ժուլիէի ակումբ՝ 09/933096
- ԶԱԼՔԱՅԻ ԸՐԶԱՆ Գարեգին Նժդեհ ակումբ՝ 01/877661
- ՆԱԿՐ ՄՈՒԹ ԸՐԶԱՆ Անի ակումբ՝ 01/895481
- ՊՈՒՐԳ ՀԱՄԱՌԻՏ ԸՐԶԱՆ Մարդարապատ ակումբ - Մարաշ՝ 01/262949
- Ռուբէն ակումբ - Նորաշէն՝ 01/254322
- Ղոբ ակումբ - Արագած՝ 01/268647
- Ազիբեան ակումբ - Սիւ՝ 01/261636
- Քաղաքապետարանի շէնքեր - «Բաբգէն Սիւնի» կեդրոն՝ 01/489477
- Թեհլիբեան ակումբ - Ամանոս՝ 03/587498
- Մար Եուսէֆի ակումբ՝ 01/254709
- Նիկոլ Դուման ակումբ - Թրատ՝ 01/260912
- Քաղաքապետարանի շէնքեր՝ 01/263440

Ը. Յ. Դ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՔ Է ԱԻԵԼԻ ...

Շարունակուած Ա. էջէն

յատասնի անվտանգութիւնը: Ռաֆայէլ Էսթրելլա շնորհակալութիւն յայտնելով իր ստացած այցելութեան հրաւերին համար, նշեց, թէ «բարձրագոյն պատիւ է

այցելել երկիր մը, որ աշխարհին յայտնի է իր քաղաքականութեամբ եւ որ կարենաբար ղեր ունի շրջանային գործընթացներու մէջ»:

Ան դրա դ ա ռ ն ա լ ո Վ

ՕԹԱՆԻ խորհրդարանական վեհաժողովի եւ Հայաստանի Ազգային Ժողովի յարաբերութիւններուն՝ Էսթրելլա ընդգծեց, թէ ՕԹԱՆԻ մէջ կարելի չէ անտեսել հարաւային Կովկասի մէջ կայունութեան եւ խաղաղութեան հաստատման անհրաժեշտութիւնը, եւ այդ իսկ պատճառով ՕԹԱՆ կարելի կը նկատէ ՕԹԱՆԻ մէջ Հայաստանի ներկայութեան խորացումը: «Թերեւ առաջին քայլ, Հայաստանի պիտի տրուի դիտորդի կարգավիճակը, որուն հիման վրայ Հայաստան կրնայ մասնակցիլ խորհրդարանական վեհաժողովի նիստերուն», ըսաւ Էսթրելլա: Հանդիպման ընթացքին քննարկուեցան նաեւ քաղաքական ու տնտեսական շրջանային համագործակցութեան առնչուող հարցեր: Էսթրելլա նաեւ առանձին հանդիպում մը ունեցաւ Արմէն Խաչատրեանի հետ:

ԿՈՒԶՈՒԻ

●Ոսկերիչ փորձառու գործարար մը հեռ. 01-896109:

mano plus
G i f t w a r e
03/388708-Fax:01/489659
e-mail: manoplus@d.m.net.lb

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆ

ՄԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՄԸ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐ՝
Արարապ Ահարոնեանի, Կարօ Կապուրակեանի, Մանուկ Մինասեանի, Հրայր Կայծակեանի, Միւրէյ Հարպոյեանի, Գրիգոր Գրանեանի, Լիզա Ժազարեանի եւ Վիզէն Տիշչէքեանի
Ընկերակցութեամբ՝
Շանթ Տիշչէքեանի եւ իր նուագախումբին
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 17 Մայիս 2002, երեկոյեան ժամը 8:30ին, Պուրճ Ըամուտի «Արին» կեդրոնին դիմաց:

LOԻԻ «ԱՂԹԱՄԱՐ» ՄԱՍՆԱԾԻԴԻ
ՀԻՍՆԱԴՐՈՒԹԵԱՆ 60ԱՄԵԱԿԻ
ՃԱՇԿԵՐՈՅԹ
ՊԱՐԱՀԱՆԴԵՍ
Հովանաւորութեամբ՝
ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
(Առաջնորդ Լիբանանի հայոց թեմի)
Մասնակցութեամբ սիրուած երգիչ՝
ՀՐԱՉ ԿԱՅԾԱԿԵԱՆԻ
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 18 Մայիս 2002ի երեկոյեան ժամը 9:00ն սկսեալ ձաշարան «Արեւ»ի մէջ, Այնճար:

ԱՂԱՄԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.

CAMPOMATIC
ԸՄՊԵԼԻ ԶՈՒՐԻ ՍԱՌԱՐԱՆ
(ՏԱԸ ԵՒ ՊԱՂ)
MADE IN KOREA
Պուրճ Համուտ - քաղաքապետարանի հրապարակ
ՀԵՌԱԶԱՅԻՆՆԻՆ՝ 01-241000
Չոր մուտք, Սանթրոլ Պլանցոյէն: Կառատունը պահովուած:

ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱԿ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆԻՍԻ ՎԵՐՋ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ՄԸ ԱՊԱՀՈՎԵԼ



Զ. ԱՆԱՆ կը պատասխանէ լրագրողներու հարցումներուն Լարնաքայի օդակայանին մէջ:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան երէկ Կիպրոս հասած է՝ խաղաղարար բանակցութիւնները փրկելու առաջադրութեամբ:
Անան, որ 1979էն ի վեր ՄԱԿի առաջին ընդհանուր քարտուղարն է, որ Կիպրոս կ'այցելէր, յայտնած է, որ մտահոգ է, թէ նախագահ Կլաֆթոս Քլեբիտէսի եւ թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշի միջեւ վերամիացման բանակցութիւնները շատ դանդաղ յառաջդիմութիւն կ'արձանագրեն:
Լառնաքայի օդակայանին մէջ ան թղթակիցներու յայտնած է, որ երկու ղեկավարներուն պիտի չեղտէ, թէ անհրաժեշտ է մինչեւ Յունիսի վերջ կարելոր իրագործում մը ապահովել: Այդ ժամկէտը ճշգրտած են իրենք Քլեբիտէսն ու Տենքթաշը՝ յառաջդիմութիւն արձանագրելու համար:
Բանակցութեանց մօտիկ աղբիւր մը ըսած է, որ եթէ Յունիսի ժամկէտը չի բարկանացուի, անիկա պիտի մղէ, որ ՄԱԿը իր ղեկավարութեան շրջանէն անկէ զտրծնական դարձնէ Նիկոսիոյ բանակցութեանց մէջ: Ներկայիս անիկա լուսարձակներէ հեռու կը գործէ:
Տենքթաշի մէկ խորհրդակցանք՝ Մովթազ Սոյալ երէկ յայտնած է, որ լաւատես չէ Անանի այցելութեան գծով:
Ինքնին Տենքթաշ երկուշաբթի օր ըսած է, թէ մեծ հաւանականութիւն չկայ, որ երկու կողմերը մինչեւ Յունիս համաձայնութիւն մը գոյացնեն, հակառակ Անանի այցելութեան:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՅԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՈՍԿՈՒԱ - ՕԹԱՆ ԱՆԿԻԼՆԱԴԱՐՁԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

ՌԵՅՔՅԱԻԻԲ, 14 (ՌՈՅԹԸՐԸ).- ՕԹԱՆ յայտարարելով, որ Պաղ Պատերապմը անգամ մը եւս վերջ գտած է, նախկին թշնամի Ռուսիոյ հետ անկիւնադարձաին գործակցութեան մը հաւանութիւն տուած է՝ Սեպտեմբեր 11ի յարձակումներէն ետք վարկ տալու համար ահաբեկչութեան, զէնքերը հակակշիռի տակ դնելու եւ տագնապներու պարագային տնօրինումներու դիմելու հարցերով գործակցութեան:
Իսլամտալի մէջ կայացած ժողովին ընթացքին, ՕԹԱՆի ընդհանուր քարտուղար ձորձ Ռուպրթաքըն յայտնած է, որ միասնաբար այն երկիրները, որոնք ամբողջ չորս տասնամեակ իրարու սպառնացած են «ատելութեան եւ վախ պատին մէկ կողմէն միւսը, այժմ՝ առիթը ունին եւրասիանտեան ապահովութիւնը դէպի աւելի լաւ փոխելու»:
Իր ընդլայնող հորիզոններուն գծով ցարդ իր ամէնէն յստակ յայտարարութեան մէջ, 19 անդամ հաշտուող արեւմտեան պինակցութիւնը յայտնած է, թէ իր ուժերը պէտք է կարենան «արագօրէն շարժիլ դէպի ուր որ անոնց կարիքը կայ»՝ ահաբեկչութեան եւ հաւաքական քանդումի զէնքերու ներկայացուցած նոր սպառնալիքներուն դէմ պայքարելու համար:
ՕԹԱՆ ցարդ իր գործողութիւնները սահմանափակած է Եւրասիանտեան շրջանին մէջ,



Չախէն աջ՝ Իվանով, Օթանի ընդհանուր քարտուղար Ռուպրթաքըն եւ Փաուլը:

սակայն ամերիկացի պաշտօնատար մը յայտնած է, թէ Մ. Նահանգներու վրայ Սեպտեմբեր 11ի յարձակումները վերջ տուած են «շրջանէն դուրս» քանակէն:
ՆՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԳԾՈՎ՝ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ
Դիւանագէտներ երէկ յայտնած են, որ ՕԹԱՆի եւ ռուս դիւանագէտներ համաձայնութիւն գոյացուցած են՝ ՕԹԱՆ - Ռուսիա նոր խորհուրդի մը գծով կարգադրութիւններու շուրջ:
Խորհուրդը կը նկատուի խորհրդանիշ մը՝ Պաղ Պատերապմի նախկին թշնամիներուն միջեւ այլափոխուած յարաբերութիւններուն:
Ռուսիա նոր խորհուրդին մէջ իբրեւ հասարակ պիտի նստի՝ ՕԹԱՆի 19 անդամներուն, քննարկելու համար 20 երկիրներուն

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ ԽՕՍԻԼ ՊԵՏԵ Է ՍՈՐԿԻՆ

ՄԱՐԻ, 14 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի նախագահ Մոհամէտ խաթեմի զգուշացումի հրահր ուղղեց ամերիկացի ղեկավարներուն, պահանջելով որ բարեփոխեն իրենց ուժը եթէ կ'ուզեն բարելաւել թեհերանի հետ կապերը, որոնք 23 տարիէ ի վեր թշնամական ընդթ ունին:
Սաթեմի, որ Ուաշինկթընի հետ կապերը բարելաւելու ծրագրերը պաշտպանողներէն մէկն էր, յայտարարեց, որ այնքան ատեն որ ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատարներ կը սպառնան, կ'անարգեն ու կը վարկարեկեն իրանն ու իրանցիները, թեհերան պատրաստ պիտի չըլլայ ընդունելու որեւէ յարաբերութեամբ Ուաշինկթընի հետ: Տիւրքի կարելի կը դառնայ, երբ իրան նկատէ, թէ ամերիկացիները հրաժարած են իրենց սպառնալիքներէն ու վիրաւորական ոճէն, աւելցուց Սաթեմի: Ան չեղտեց, որ ամէն բանէ առաջ, ամերիկացի պաշտօնատարները քաղաքավարութեամբ խօսիլ պէտք է սորվին:
Միացեալ Նահանգներ եւ անոր եւրոպացի դաշնակիցները տարակարծիք են իրանի հանդէպ որդեգրելիք քաղաքականութեան մասին: Եւրոպական Միութեան երկիրները կ'ուզեն կապեր հաստատել ու գործադիր կանգնել Սաթեմի շուրջ խմբուած բարեկարգականներուն՝ շուրջ մէջ պահելու համար պահանջականները, որոնք դժուարութիւններ կը ստեղծեն նախագահի բարեկարգումներուն գործադրութեան դիմաց: Սակայն Ուաշինկթըն կ'ըսէ, որ Սաթեմի անկարող ղեկավար մըն է:
Սաթեմի անցեալ շաբաթ յայտարարած էր, որ պիտի հրաժարի, եթէ պահանջողականները շարունակեն աւելի ազատ ու բաց իրան մը ունենալու իրենց ճիգերը: Երէկ սակայն ան յայտարարեց, որ պիտի շարունակէ իրեն վստահուած պարտականութիւնը: Ան աւելցուց, որ պիտի փորձէ լուծել բոլոր դժուարութիւնները:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹՈՒՐԿԻՈՅ ՄԷՋ՝ ԲԱԽՈՒՄՆԵՐ

ԹՈՒՆՉԵԼԻ, 14 (ՌՈՅԹԸՐԸ).- Արեւելեան Թուրքիոյ լեռնային մէկ շրջանին մէջ Երեքշաբթի օր բախումներ ծայր տուած են ապահովութեան ուժերուն եւ ըմբոստներու միջեւ, սակայն մարդկային վնասներու մասին անմիջական տեղեկութիւններ չեն հաղորդուած:
Թուրք պինտորներ՝ ռազմական օդանայներու եւ ուղղաթիւներու վորստութեամբ, բախում ունեցած են ՔԱԿի շուրջ 100 անդամներու եւ մատիստական ըմբոստներու հետ, յայտնած է պաշտօնատար մը:
Իշխանութիւնները արգիլած են քաղաքայիններու՝ մտնել բախումներու շրջանը, որ ՔԱԿի նախկին միջնաբերդերէն՝ Ալիպօղայիի շրջանն էր:

ՌԻԱՇԻՆԿԹԸՆ Կ՝ՈՒԶԷ ՇՈՒՔԻ ՄԷՋ ԶԳԵԼ ՔԱՐԹԸՐԻ ՔՈՒՊԱ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը Երկուշաբթի օրուան ամբաստանութիւնը, որ կ'ըսէր, թէ Քուպա «կարողութիւնը եւ կարողակամութիւնը» ունի կենսաբանական զէնքերու արտադրութեան շուրջ հետապնդութիւններու ձեռնարկելու:
Ասիկա աւելի մեղմ ամբաստանութիւն մըն էր Քուպայի դէմ, բաղդատած արտաքին գործոց փոխ նախարար Տոն Պոլթրի անցեալ Երկուշաբթի օրուան ամբաստանութիւնը՝ զայն սուտ մը նկատելով:
Վարցը արժարծուած է նախկին նախագահ Ճիմի Բարթրօրի կողմէ, որ Երկուշաբթի օր այցելած է Քուպայի Օհիոյի ճարտարագիտութեան եւ Կենսաբանական տեղեկագրութեան կէտրը:
Քարթրօր դիտել տուած է, որ Ուաշինկթընի ամբաստանութիւնը կը նպատակադրէ Քուպա իր անկիւնադարձային այցելութիւնը շուրջ մէջ ձգել: Ան ըսած է, որ այցելութեանն առաջ, ամերիկացի պաշտօնատարներ իրեն յայտնած են, թէ չկայ որեւէ փաստ, որ Քուպան նման զէնքերու արտաձումին կը կապէ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՈԼԱՐՈՎ ՈՒՂԱԿԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

10,25%* տարեկան տոկոսով

*Նուազագոյն մասնակցութիւն՝ 3000\$
*3 տարեկան մասնակցութեան տեւողութեամբ
*Տեղադր կը վճարուի իւրաքանչիւր 6 ամիսը անգամ մը:

**Հեռ.- 01/745660
01/248997**

Bank of Commerce Finance Bank s.a.l

100% Cotton & Satisfaction

CM CLAUDE MÜLLER

Tailor-made & Ready Shirts

Bourj-Hammoud Main Road Tel: 01/267242

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARD ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԵՐԱԽՏԱԿՈՐԸ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆ

Մշակութային կեանքին մէջ թատրոնը ունի իր իւրաքանչիւր տեղն ու դերակատարութիւնը: Քիչ են անոնք, որոնք ամբողջովին նուիրուեցան այս մարզին եւ իրենց բոլոր կարելիութիւններն ու կարողութիւնները դրին ի սպաս հայ թատրոնի բարգաւաճման եւ զարգացման: Այդ քիչերուն կարգին է շուրջ 35 տարին շարունակ անխորհրդ կերպով թատրոնին նուիրուած բեմադրիչ, դերուստոյց եւ դերասան Վարուժան Խտըշեանը, որուն անունը յիշելով անպայման պէտք է նշել, թէ ան նոր շունչ եւ նոր դիմագիծ բերաւ լիբանանահայ թատրոնին: 1960ական թուականներէն թատրոն մուտք գործած խտըշեան տարիներ շարունակ հաստատ քայլերով քայլեց թատերական ուղիէն, իրեն հետ դէպի այդ ուղին առաջնորդելով բազմաթիւ արուեստագէտներ, եւ հասաւ մինչեւ մեր օրերը եւ լիբանանահայութիւնը տակաւին մնալուն յոյս ունի մեծ բեմադրիչն նոր ներկայացումներ տեսնելու:



Չաւեն Խտըշեան եւ Բարսեղ Տեր Կարապետեան

Վարուժան Խտըշեան առաջին անգամ բեմ կը բարձրանայ «Քույր Տը Լա Սալ»-ի մէջ, Նշան Պէշեպեթեանի «Կարեւոր ժողով մը» թատերախաղի ներկայացման ընթացքին, ուր ընդարձակ ժողովականներով լեցուն բեմին վրայ, աչքի կը գարնէ տակաւին տասնութ տարիքը չբոլորած բեմադրիչը:

Այդ օրերուն «Գ. Իփէկեան» թատերախումբին մէջ մեծ արձագանգ կը գտնէ օրուան անակնկալը: Վրայ կը հասնի Լեւոն Շանթի «Շղթալուծը»,

պատմական բեմադրութիւնը Համազգայինի «Գ. Իփէկեան» թատերախումբին, ուր կը մէկտեղուէին Պէշեպեթեանի թատերական բոլոր ուժերը, երէց, պատանի թէ մանուկ: Հարիւր դերակատարներով շարժում մը՝ գաղութին կու տայ նոր կենսունակութիւն, որուն կը մասնակցէր պատանի Վարուժանը: Տարի մը ետք՝ վերջին ներկայացման, իրեն կը վստահուի գլխաւոր դերերէն Սաղազիշի կերպարը, գոր կը կատարէ մեծ յաջողութեամբ:

Տարիները իրենց հետ կը բերեն բեմականացումներ՝ «Տուն փեսայ», «Ոսկի արքայադուր», «Քաղաքավարութեան վնասները», «Փառքի վաշխառուները», «Յուզայ», «Պեպո», «Քառոս», որոնց պատրաստութեան բոլոր փորձերուն անխորհրդ ներկայ կը գտնուի Վարուժան Խտըշեան եւ մեծ հետաքրքրութեամբ ու սիրով կը հետեւի իւրաքանչիւրին դերակատարման: Յաճախ երբ յուշարարը ուշանար իր դերին մէջ՝ Վարուժանը անմիջապէս կու տար պէտք եղած նախադասութիւնը... Արթուն կը հետեւէր իւրաքանչիւր դերակատարի տուած ցուցմաններուն, եւ երբ դերակատար մը բացակայէր փորձերէն կամ ներկայացումէն՝ անոր տեղը մշտապէս կը մարմնաւորէր Վարուժանը...



«Պեպո»ի Զիմզիմֆի դերով, ան իր կարողութեամբ եկաւ համոզելու բոլոր թերահաւատները, թէ ինք՝ արժանաւոր բեմադրիչն էր «Կարեւոր ժողով մը» թատերախաղին եւ բեմադրիչ Ժորժ Սարգիսեանը իր անվերապահ հիացումը յայտնեց:

«Գ. Իփէկեան» թատերախումբի սփիւտին եղաւ իր առաջին ու հիմնական դերոցը, որ յաջողեցաւ գինք մղել իր արժանաւորագոյն ճանապարհին... Իր առաջնութիւնը կաշկանդող վաճառատունն ու շուկան ձգելով ան կը մեկնի Լոնտոն՝ թատերական գիտութիւններ ուսանելու:

Վարուժան Խտըշեանի վիճակուած էր թատրոնը: Պատանի տարիքին իր տեսած թատերախաղերուն նոյնութիւնը կ'աշխատէր ներկայացնել տնեցիներուն: Դերասաններուն ոչ յաջող խաղերով... եւ երբ տարիներ վերջ կազմուեցաւ, կազմակերպեց իրեն յատուկ

ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ
Ծար.՝ էջ 8

ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆԻ ԲԵՄԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- «Վերակացուն» (1968)
- «Անդուն 2եխով» (1968)
- «Սալեմի վնուկները» (1969)
- «Յարդէ գլխարկ» (1970)
- «Ո՞վ է վախճողը Կիրճիմիս Վուլֆէն» (1971)
- «Մարա Ստա» (1972)
- «Արեւելեան Ատամնաբոյժը» (1973)
- «Կենդանաբանական պարտէզի պատմութիւն» (1974)
- «Գիշեր մը դուրս» (1974)
- «Վեցտիկի վաճառականը» (1974)
- «Յարդէ գլխարկ» (1975)
- «Կոճառ գոյգը» (1977)
- «Ալաֆրանկա» (1978)
- «Հանրային պարտէզին մէջ բոպիկ» (1978)
- «Կամուրջէն դիտում» (1985)
- «Ծեփոդը հնչեցուր» (1986)
- «Հայաստանի լեռներու սրբաբանը» (1987)
- «Հին Աստուածներ» (1988)
- «Գիշերուան մէջ
- Կենդանաբանական պարտէզին մէջ» (1989)
- «2եխովեան Միծաղ» (1990)
- «2եխովեան Միծաղ» (1991)
- «Եսի մարդը» (1991)
- «Օսքար» (1994)
- «2րդ պողոտայի բանտարկեալը» (1995)
- «Երկնքի ճամբով» (1996)
- «Գիշեր» (1997)
- «Պրիզայանի գաղթականը» (1997)
- «Ծերի նուար» (1998)
- «Ցանկայարոյցներու վերջինը» (1998)
- «Կայսր» (1999)
- «Բլրեցի Եփփէն» (1999)
- «Մինչեւ Ուր» (2000)

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՒԱՆԻ «ԱՊԱԳԱՅ. ԽՈՍԱՍՅՈՂ» ՄԱՆՉԸ



1955ին «Գասպար Իփէկեան» որոշած էր բեմադրել Լ.Շանթի «Շղթալուծը»: Հարձի փերին համար կը փնտռէի օրիորդ մը: Դիմեցի Սոնա Խտըշեանին: Մերժեց: Բայց խնդրեց, որ դեր մը տամ իր 17 տարեկան փոքր եղբորը: «Շնորհակալ է ու շատ կը փափաքի բեմ ելլելը»: Ըսի՝ թող գայ: Եւ եկաւ Վարուժանը: Իր տարիքին յարմար դեր մը տուի: Արդիւնքէն գոհ մնացի, որովհետեւ խմոր ունէր եւ ապագայ կը խոստանար: Յետոյ տարուէ տարի հետզհետէ աւելի կարեւոր դերեր խաղալով, 7 տարի վերջ դարձած էր արդէն թատերախումբին կարեւոր ու կազմակերպուած ուժերէն մէկը, մասնաւորաբար քարաքերի դերերուն պատշաճող:

Օր մը սակայն անակնկալի մը առջեւ գտնուեցայ: Յայտնեց, թէ որոշած է երթալ Լոնտոն՝ թատերական ճիւղին հետեւելու: Իր այդ որոշումէն ետ կեցնելու համար թափած բոլոր ջանքերս մնացին ապարդիւն: Գնաց...

Բայց ահա վերադարձէն մինչեւ այսօր, ամբողջ 10 տարի, ներկայացումէ ներկայացում, Վարուժանը ո՛չ միայն շարունակեց տալ երբեմնի «ապագայ խոստացող» դերակատարին սպասուածը, ո՛չ միայն շարունակեց հաստատել իր դերասանական անվիճելի շնորհքը, այլեւ դարձաւ ինքնապատահաբար ու յանդուգն բեմադրիչ մը:

Սակայն թատրոնի ճամբան փշոտ է, ասպարէզը՝ ապերախտ: Յաղթահարելու համար անհատուած խոչընդոտները, վերիվայրումներն ու յուսալքումները, պէտք է զինուիլ յամառ յարատեւութեամբ, անպարտելի հաւատքով ու անկուճկ կամքով:

Դերասան ու բեմադրիչ Վարուժանը իր նկարագրին ու խառնուածքին մէջ ունի այդ գիծերը: Սրտազին մաղթանքս է, որ զինաթափ չըլլայ ու շարունակէ նոյն թափով:

ԺՈՐժ ԱՐԳԻՍԵԱՆ

*

*

Վարուժան Խտըշեան օժտուած է գրեթէ բոլոր տուեալներով հասնելու մտքի մը, վերելքներուն ու անկումներուն, հալածանքի ու գնահատութեան: Ըստ անոր, Վարուժան Խտըշեան «Թատրոն 67»-ի հետ հրապարակ իջնելով փորձած է հայ հասարակութիւնը դուրս քաշել իր աւանդական քունէն, իր մեղկ, պոքոքու երջանկութեան, ուր ան կը խրի ամէն անգամ որ իր շահած ամսականէն ու իր բարոյական պղծիկ յուզումներէն՝ գոհ՝ կը մխրճուի առօրեայ, խաղաղ ու տափակ գոյութեան մը մէջ:

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

*

*

Պէշեպեթեան թատրոնը, Լիբանանի տիրուող դէպքերը կանխող տանամետակին, բոլորեց շրջան մը արագ վերելքի: Այդ արդիւնքը ապահովող երախտաւորներու առաջին գիծին կու գայ դէմքը Վարուժան Խտըշեանին:

Ազգերու գրականութեան փոխադրած ու բեմադրած իր գործերով՝ յաջողեցաւ ո՛չ միայն նպաստել հանդիսատեսներուն ճաշակին բարձրացման, այլեւ վտարել բեմերէն հնոսիները մեր ականդակն խաղացանկին:

Բեմադարձարու մի, ինչպէս խաղարկութեան ու տրամախոսութեան մէջ երեւան բերաւ ճանաչելի ոճ մը, որ եթէ չտուաւ մեր բեմին հայեցի դրոշմ, դարձաւ ուշագրաւ իր ինքնուրոյնութեամբ:

ՍԵՐԳԷՅ ՎԱԼՍԵԱՆ

*

*

Վարուժան Խտըշեանի «Թատրոն 67»-ը իր տանամետակ թատերական գործունէութեամբ եւ բեմադրութիւններով լիբանանահայ թատերական կեանքէն ներս բերաւ իսկական նորութիւններ: Իր ընտրած թատերախաղերով եւ բեմադրութեան յանդուգն փորձերով տեղաշարժ յառաջացուց թատերական հասկացողութեան մէջ՝ եւ նոր որակ ստեղծեց:

Թատերական հասկացողութեան ճաշակի տէր լիբանանահայ թատերասէրը սպասեց անոր բեմադրութիւնները, եւ ընդհանրապէս սրահէն դուրս եկաւ ներքին բաւարարութեամբ: Հոգեպէս եւ մտաւորապէս գոհացած:

Բեմադրիչ եւ դերասան Վարուժան Խտըշեանի տաղանդը, թատերական պատրաստութիւնը, խիզախութիւնը հիմնական ազդակներն էին, տասնամեակի մը ընթացքին «Թատրոն 67»-ի վալյաժ վարկին:

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Ծար.՝ էջ 8

ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆ ԿԸ ԽՕՍԻ...

- Թէ ինչու կը սիրեմ որոշ թատերախաղ մը, ոչ ոք գիտէ: Մարդ չի կրնար բացատրել, թէ ինչու՞ կը սիրեմ բան մը: Յանկարծակի բան մըն է, որ կը պատահի:

- Ընդհանրապէս, երբ հանդիսատեսը կը դիտէ իմ բեմադրութիւններս, տուն կ'երթայ եւ կը խոկայ ու չի քնանար, կամ երկու ժամ կը խօսի այդ մասին, եթէ հաճելի կատակերգութիւնն էր:

- Նախընտրելի է աշխատիլ վիս լսող եւ ըսածներս գործադրող դերասաններու հետ: Արհեստավարժ դերասաններու հետ աշխատիլ ակելի դժուար է, որովհետեւ անոնք կը փորձեն իրենց գիտցած ձեւով խաղալ՝ առանց բռնելու բեմադրիչին բազմակերպիչը:

- Այն դերասանները, որոնք վաղուց աշխատած են հետս, ինծի լսել էի պալ գիտեմ, կը ծանշանաւ ծայնային էլեկէշները եւ հայերէն ոճը: Ինչ լաւ է, որ գիտեմ, որովհետեւ կրնամ նաեւ որդեգրել վայր:

- Թատերասարահ պէտք է մտնել միշտ նոր «ակնոցով», նորը, տարբերը, ուրիշը տեսնելու տրամադրութեամբ, ո՛չ ակնկալուածք անգամ մը եւս վայելուելու սխալ մտեցումով:

- Թատրոն կու գանք, բեմին վրայ իրական մարդոցով իրական պատմութիւն մը տեսնելու, լսելու համար: Ես այս սկզբունքին վրայ հիմնուած իրականութիւնը կ'աշխատիմ վերանկէ գերիրականի: Այսինքն, երբ բեմին վրայ երեւած դերասանը կը տեսնեմ ու կը լսեմ ձայնը, ինչու՞ նաեւ չպահանջ ներկայութիւնը ու շօշափելի չդարձնեմ անոր գոյութիւնը: Կ'աշխատիմ հանդիսականը բեմին հաղորդակից դարձնել, ա՛յլ ակնին՝ վայն մասնակից դարձնել բեմին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՉՄԻՒՌՆԻԱ՝ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՈՒ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԿԵԴՐՈՆ



Հայ համայնքը ըզմացաւ: Այնուհետեւ ժ.Ը. դարերուն անիկա աւելի ստուարացաւ Հայաստանէն հասնող գաղթականական նոր ալիքներու շնորհիւ: Զմիւռնիա նաեւ հայ գրչութեան, մշակոյթի եւ տպագրութեան կարեւոր կեդրոն մը դարձաւ:

ԺԱՆՏԱՆՏ

Զմիւռնիա քաղաքը եւ անոր հետ հայութիւնը մեծ ցնցումի ենթարկուեցան 1812ի ահաւոր ժամտախտին: Արդարեւ, Պոլիսէն ու Եգիպտոսէն հասնող նաւերու եւ Փոքր Ասիոյ կարաւաններուն միջոցով ժամտախտը մտաւ Զմիւռնիա եւ տարածուեցաւ բովանդակ Օսմանեան կայսրութեան մէջ՝ քանի մը ամսուան ընթացքին սոսկալի աւերներ գործելով: Ամէնէն աւելի տուժող շրջանը դարձաւ Զմիւռնիա, ուր մօտաւորապէս 45 հազար մարդ վարակուեցաւ եւ մահացաւ:

Այդ օրերուն զմիւռնիացիք առաջին հերթին ոչնչացուցին բոլոր կառուները (որովհետեւ ժամտախտը շփուած միջոցով կը փոխանցուի, իսկ կատուները ամէն տեղ ելումուտ ունենալով՝ հիւանդութիւնը կը տարածեն): Քաղաքին հայ եւ օտար բարեկեցիկ ընտանիքները, շփումէ զերծ մնալու համար, իրենց բնակարանները քաշուեցան եւ շրջապատին հետ ամէն հաղորդակցութիւն կտրեցին: Իսկ հարուստներէն անոնք, որոնք

ստիպուած էին դուրս ելլել, իշու մը վրայ նստելով եւ առաջնորդ մը առնելով ճամբայ կ'ելէին: Առաջնորդը առջեւէն կ'երթար եւ գաւազանով կը հեռացնէր դիմացը ելլողը՝ շփումէ հեռու պահելով իշուն վրայ նստողը: Նոյն օրերուն շատ մը զմիւռնիացիներ, հալածական՝ փախուստ տուին տարբեր շրջաններ. քաղաքը այնքան ամալացաւ, որ շատ մը թաղերու մէջ խոտ բուսաւ:

Նշենք, որ 1812ի տուեալներով Զմիւռնիա ունէր 106 հազար բնակիչ, որուն տասը հազարը՝ հայ:

ԱՂԱԿԱՆՑ ՎԱՐՄԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ

Զմիւռնիոյ մէջ 1799ին բացուած էր Մեսրոպեան վարժարանը՝ տղոց համար, բայց աղջիկներ ուսում ստանալու կարելիութենէն զրկուած էին: Մտողներ, հին սովորութեան համաձայն, իրենց աղջիկները դպրոց դրկելը ընդունուած կարգերու դէմ կը նկատէին: Բայց կային քիչ թէ՛ շատ զարգացած եւ քաղաքին եւրոպական հասարակութեան հետ շփում ունեցող ընտանիքներ, որոնք իրենց աղջիկներուն տան երէցին կամ առանձին տուներու մէջ դասաւանդող անձի մը միջոցով գրել-կարդալ կը սորվեցնէին:

Այս կացութեան վերջ տալու համար 1820ին Ազգային հիւանդանոցին մէջ սրահը յատկացուեցաւ իբրեւ աղջիկանց վարժարան, ուր հաւաքուեցան ուսումնասէր աղջիկներ եւ տեղույն քահանային հսկողութեան ներքեւ սկսան գրել-կարդալ սորվիլ: Քանի մը տարի ետք թրիխսթ եւ ապա Վիեննա հաստատուած զմիւռնիացի մեծահարուստ վաճառական Յակոբ աղա Սարգիսեան իր ծախսերով կառուցել տուաւ աղջկանց դպրոց մը, ուր փոխադրուեցան հիւանդանոցի սրահին մէջ աշակերտող աղջիկները: Միայնակ եւ գեղեցիկ այս վարժարանին կառուցման թուուեցաւ չէ յիշուած արձանագրութեան մէջ, բայց հաւանաբար անիկա 1830ական տարիներուն շինուած է: Վարժարանը կոչուեցաւ իր բարերարին՝ Յակոբ Սարգիսեանի անունով (հետագային՝ 1849ին անիկա վերակոչուեցաւ Հռիփսիմեանց վարժարան անունով):

Նորաշէն վարժարանին մէջ առաջին անգամ ուսուցիչ նշանակուեցաւ Յովհաննէս վարժապետ Շահինեան, որ առաջին անգամ զմիւռնիացի հայ աղջիկներուն քերականութիւն սկսաւ սորվեցնել:

ՉՄԻՒՌՆԻՈՅ ԹԵՄԻՆ ԿՅՈՒՄԸ ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ

Զմիւռնիոյ թեմը հին ժամանակներէն ի վեր էլ միաձինի Ամենայն Հայոց կաթողիկոսութեան իրաւասութեան ենթակայ եղած է, սակայն մնայուն առաջնորդներ միշտ չէ ունեցած: Երբեմն տարիներով թեմը առանց առաջնորդի մնացած է: Եղած են ժամանակներ, երբ այցելու հովիտներ, տեղապահներ կամ նուիրականներ կառավարած են համայնքը: Անոնք միաժամանակ կատարած են դաստիարակչական երախտարժան աշխատանք:

Երուսաղէմէն Յարութիւն եպիսկոպոս իբրեւ նուիրակ տարբեր առիթներով այցելած է Զմիւռնիա եւ 1793ին հոն ալ վախճանած է:

Միւսեաց Մարտիրոս եպիսկոպոս, որ անձնական ծանօթութիւն եւ կապեր ունէր ուսական ու պարսկական արքունական եւ իշխանական շրջանակներուն հետ, իր հօր՝ Միրզայից Տէր Յակոբ քահանային հետ 1800ին Զմիւռնիա ժամանեց իբրեւ հովիտ (արդէն զմիւռնիացիներուն մէկ կարեւոր մասը սինեցի գաղթականներու սերունդներէն): Տարի մը ետք Յակոբ քահանայ վախճանեցաւ Զմիւռնիոյ մէջ, իսկ Մարտիրոս եպիսկոպոս վերադարձաւ էջմիածին:

Իբրեւ առաջնորդ, 1825ին էլ միաձինն Զմիւռնիա ղրկուեցաւ Ստե-

փանոս եպիսկոպոս Ենովբեան: 1826-1827ի ուսութեան ընթացքին պատերազմին պատճառով եւ քաղաքական պայմաններու բերումով՝ Զմիւռնիոյ թեմը Պոլսոյ պատրիարքութեան կցուեցաւ: Ստեփանոս եպիսկոպոս էջմիածին վերադարձաւ, իսկ փոխարէնը Աղաւնի Ստեփան եպիսկոպոս առաջնորդ նշանակուեցաւ: 1830ին անոր յաջորդեց Երուսաղէմի պատրիարք Գարբիէլ եպիսկոպոս: Անոր յաջորդեց Թադէոս եպիսկոպոս, որ իր թեմին գիւղերուն տուած այցելութեան մը ժամանակ 1837ին վախճանեցաւ Ալեքէի մէջ: 1838ին առաջնորդ ընտրուեցաւ Պօղոս վարդապետ Թագթագեան, որ 1839ին էլ միաձինի մէջ Զմիւռնիոյ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ եւ առաջնորդական աթոռը պահեց մինչեւ վախճանումը 1872:

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՃԱՌԱՎԱՅՈՒՄԻ ԿԵԴՐՈՆ

Զմիւռնիոյ Ապրոյեաններուն տունը 1799ին վերածուած էր դպրոցի՝ Մեսրոպեան անունով: Ծնորհք ամիրայի կարգադրութեան հոն իբրեւ ուսուցիչ տարիներ շարունակ պաշտօնավարած է մանկավարժ եւ բանաստեղծ Տէր Յովհան Միրզա Վանանդեցի:

Վարժարանը փոքր եւ յարմարութենէ զուրկ ըլլալով՝ Զմիւռնիոյ հայութիւնը Ստեփանոս եպիսկոպոս յունվեբանի առաջնորդութեան օրով, 1825 Մայիսին, դպրոցին նոր եւ ընդարձակ շէնք մը կառուցելու որոշումը տուաւ եւ անմիջապէս

գործի ձեռնարկուեցաւ: Հին դպրոցը քանդուեցաւ եւ անոր տեղ կսկան շինարարական աշխատանքները: Ստեփանոս եկեղեցւոյ եկամուտները տրամադրուեցան շինութեան ծախսերուն: Մեծապէս օգտակար եղան մանաւանդ Գրիգոր աղա Պապոյեան (որ ժամանակ մը անգլիական հիւպատոսարանին թարգման եղած է) եւ Աւետիս աղա Էթիզեան, որոնք տեղական կառավարութեան յարուցած բազմապիսի դժուարութիւնները յաղթահարելով՝ շէնքին կառուցումը հասցրեցին իր աւարտին: Նորակառոյց վարժարանին բացումը տեղի ունեցաւ 15 Նոյեմբեր 1825ին:

Նորաշէն դպրոցին առաջին ուսուցիչ նշանակուեցաւ Տէր Յովհան Վանանդեցի՝ իրեն օգնական ունենալով Տէր Գալուստ քահանայ: Վանանդեցիի կարող ղեկավարութեան ներքեւ վարժարանը հեղինակութեան ձեռք ձգեց հայութեան մէջ: 1831ին անոր յաջորդեց Ռուբէն Անդրէաս վարժապետ Փափագեան, հմուտ՝ հայերէն եւ իտալերէն լեզուներու:



Զմիւռնիոյ հայոց Ս. Թորոս եկեղեցին

Մեսրոպեան Ազգային վարժարանին Ֆրանսերէնի ուսուցիչ մը պահելու Երուսաղէմի յանձն առաւ առաջարկը եւ քառասուն հազար Ֆրանսիական կտակեց ազգային արկղին, այդ գումարով անշարժ կալուած գնելու եւ անոր եկամուտով Ֆրանսերէնի եւ անգլերէն լեզուներու դասատուներուն թոշակները վճարելու համար:

Գարբիէլ եպիսկոպոս, որ Զմիւռնիոյ առաջնորդութիւնը ստանձնած էր եւ միաժամանակ Երուսաղէմի պատրիարքն էր, ամէն ճիգ ի գործ դրաւ, որպէսզի Ֆրանսերէնը չնեւտրալիզուի վարժարանին մէջ, բայց Ֆրանսերէնի կողմնակիցները, քանի մը ամիս պայքարելէ ետք, Եգիպտոսի փոխարքայ Պօղոս պէյ Երուսաղէմի արկղիցի վարժարանը յաջողեցան Ֆրանսերէնի եւ այնուհետեւ նաեւ անգլերէնի ուսուցումը ներմուծել վարժարանէն ներս:

Անդրէաս վարժապետի տեսչութեան ներքեւ Մեսրոպեան վարժարանը բարձրագոյն մակարդակի հասաւ: տեսուչին գլխաւոր աշակիցը դարձաւ Տէր Յովհան Վանանդեցիի գրաւակը՝ Տէր Մարգար քահանայ: Հայերէնի, յունարէնի, թրքերէնի, ֆրանսերէնի, անգլերէնի եւ իտալերէնի կողմէն, ներմուծուեցան նաեւ թուրքերէնը, ինչպէս ռուսերէնը, պատմութիւն, աշխարհագրութիւն, դիցաբանութիւն, գծագրութիւն, վայելչագրութիւն, փիլիսոփայութիւն եւ ճարտասանութիւն: Դպրոցը օժտուեցաւ նաեւ գիշերօթիկ բաժնով: ուսումը ճիշդ էր: Հոն հաւաքուեցան աշակերտներ՝ Պոլիսէն, գաւառներէն եւ հեռուոր գաղութներէն:

Անդրէաս Փափագեանի ղեկավարութեամբ սաները կազմակերպեցին հայ եւ օտար լեզուներով թատերական ներկայացումներ. անոնց ուժեղութիւնը 1830ական տարիներուն բեմադրուեցաւ Կոլոսոսի «Հիւրանոցի տիրուհին» ներկայացումը:

Անդրէաս վարժապետ Փափագեանի պատրաստած սաներէն հետագային նշանաւոր դէմքեր եղան. անոնցմէ յիշենք՝ Տիգրան եւ Յարութիւն Տէտէզեանները (գրագէտ, տպագրիչ, թարգմանիչ, հրատարակիչ եւ խմբագիր «Արփի Արաբատեան» հանդէսին), Ստեփան Ոսկան (հիմնադիր եւ խմբագիր «Արեւելիք», «Արեւմուտք» եւ Ֆրանսերէն «Լա Իլլուստր» թերթերուն), Գրիգոր Մարտիրոս եւ Սահակ Կարո (որոնք Պոլսոյ մէջ «Նոյեան Աղաւնի» օրաթերթը հրատարակեցին), Գրիգոր Զիլինկիրեան (գրագէտ, խմբագիր «Մաղիկ» հանդէսին եւ թարգմանիչ Վիթթոր Հիւկոյի «Թշուառներուն»), Կարապետ Տէտէզեան (խմբագիր «Դիւմալի» թերթին) և ուրիշներ:

Ստիլեոն, Լա Ֆոնթէնի ու այլոց գործերու թարգմանիչ), եւ այլք:

ՏԵՐ ՅՈՎՀԱՆ ՎԱՆԱՆԴԵՅԻ

Զմիւռնիոյ հայութեան մշակութային կեանքին մէջ տիրական եւ երախտարժան դերակատարութիւն ունեցած կարկառուն դէմքերէն է Տեր Յովհան Միրզայեան Վանանդեցի: Զաւակը՝ Ամիրզատէ Միրզայի, ան ծնած է 1772ին, Վան եւ Կոստան անապատին մէջ ստացած է իր հոգեւոր դաստիարակութիւնը: Հետագային ան մեկնեցաւ Պոլիս, ուր 1798ին աւարտեց անոր Մայր Դպրատունը:

Պոլսոյ Մայր Դպրատունը աւարտելէն ետք ան մեկնեցաւ Զմիւռնիա, ուր Ծնորհք ամիրային կարգադրութեամբ ստանձնեց 1799ին բացուած Մեսրոպեան վարժարանին աստուածաբանութեան եւ հայկաբանութեան ուսուցիչի պաշտօնը:

Բանաստեղծական եւ ստեղծագործական շնորհներով օժտուած Վանանդեցի, ուսուցչական աշխատանքներու կողքին, նուիրուեցաւ գրական աշխատանքի. առաջին անգամ 1816ին գրեց «Ճառները զական ի Սուրբ Խաչն Քրիստոսի եւ պատմաբանական առասցառութիւն ի Սուրբ Նշանն Վարդայ» աշխատութիւնը, ուր ան մանրամասնօրէն պատմած է Վարդայ վանքին կառուցման պատմութիւնը եւ վեր առած է քրիստոնէութեան դերը հայ ժողովուրդի կեանքին մէջ:

Մեսրոպեան վարժարանը 1825ին օժտուեցաւ նոր շէնքով, որմէ ետք Վանանդեցի անոր ուսուցիչ եւ տեսուչ նշանակուեցաւ՝ իրեն օգնական ունենալով Տեր Գալուստ քահանայ: Վանանդեցի մեծ ջանք թափեց Մեսրոպեանը կրթական օրինակելի հաստատութեան մը վերածելու համար եւ քանի մը տարուան մէջ յաջողեցաւ գայն հայ կեանքին մէջ հեղինակութիւն վայելող մշակութային օճախի վերածել:

Տեսչական եւ վարչական ծանր պարտականութիւններու կողքին, գրական եւ ստեղծագործական աշխատանքները շարունակելով, 1829ին ան իր աւարտին հասցուց «Տեսարան հանդիսին Հայկայ, Արամայ եւ Արայի» դիւցազներգութիւնը, ուր ան մանրամասնօրէն լուսարձակի տակ առաւ հայ ժողովուրդի աւանդական պատմութեան ժամանակաշրջանը:

Վանանդեցի 1831ին քաշուեցաւ ուսուցիչի եւ տեսուչի իր պաշտօնէն եւ ամբողջութեամբ նուիրուեցաւ գրական եւ ստեղծագործական աշխատանքի: Անոր բանաստեղծութիւններէն յիշենք «Առ Հայաստան»ը, որ լայն ժողովրդականութիւն գտաւ եւ աւելի ծանօթ դարձաւ իր առաջին տողով՝ «Հայաստան, երկիր դրախտաւար»: Հետագային 4ոմիտաս վարդապետ գայն երգի վերածեց: 1836ին ան աւարտեց «Արփիական Հայաստանի» կոթողական դիւցազներգութիւնը, բաղկացած՝ տասը հազար տողէ, ուր ան ներկայացուցած է հայ ժողովուրդի քրիստոնէութեան ընդունման պատմութիւնը: 1841ի տարեկիզբին Վանանդեցի իր աւարտին հասցուց «Ոսկի դար Հայաստանի» դիւցազներգութիւնը, բաղկացած՝ 5500 տողէ: «Ոսկի դար Հայաստանի» աշխատանքները հազիւ աւարտած՝ ան վախճանեցաւ 3 Փետրուար 1841ին:

Տեր Յովհան Վանանդեցիի գրական Եր Տեր Մարգար քահանայ (աւագանի անունով՝ Գրիգոր), որ Մեսրոպեան վարժարանի տեսուչ Անդրեան վարժապետ Փափագեանին գլխաւոր աշակիցը դարձաւ: Իսկ անոր զաւակը Սարգիս Վանանդեցի Զմիւռնիոյ հայ ազգային կեանքի կարկառուն դէմքերէն դարձաւ՝ իբրեւ հասարակական գործիչ, խմբագիր եւ դերասան:



Զմիւռնիոյ մտակալ Պայանտըր աւանը

Կարճ ժամանակի ընթացքին ան զգալի բարեկարգութիւններ կատարեց եւ ուսումնական փոփոխութիւններ ներմուծեց: Առաջին անգամ իտալերէն, թրքերէն եւ յունարէն լեզուները սկսան դասաւանդուիլ: Նոյն ժամանակ Զուկա Պայանտըրեան թերթի վերականգնուեցաւ և ղեկավարութեան առիթով հոն գտնուող զմիւռնիացի մեծահարուստ վաճառական եւ Եգիպտոսի փոխարքային գործակալու Պետրոս աղա Երուսաղէմեանին առաջարկեց իր ծախսով

